Արձանագրություն N 2

ԵՐՋԷԿ-ԳՀԱՇՁԲ 20/17 ծածկագրով «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի օդորակիչների նորոգման և տեխնիկական սպասարկման աշխատանքների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի
Հայտերի բացման

ք. Երևան 14 մայիսի 2017թ. ժ. 12:30

Մասնակցում էին

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Հ. Հովհաննիսյանը |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ս. Չիդեմյանը |
| | Ա. Միրաքյանը |
| | Ա. Վարդապետյանը |
| | Լ. Օհանյանը |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ա. Պետրոսյանը |

Գնումների պլանով նախատեսված գինը 11 900 000 ՀՀ դրամ

Նիստի օրակարգը

1. ԵՐՋԷԿ-ԳՀԱՇՁԲ 20/17 ծածկագրով ներկայացրած հայտերի մասին:
2. Հրավեր ներկայացրած մասնակիցների գրաված տեղերի և մասնակցից համաձայն հրավերի պահանջվող փաստաթղթերի մասին:
3. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին:

Հարց 1. ԵՐՋԷԿ-ԳՀԱՇՁԲ 20/17 ծածկագրով ներկայացրած հայտերի մասին՝

1.1. Հայտ են ներկայացրել երկու կազմակերպություն՝

- ԱՁ Մեսրոպ Վիգենի Աղազարյան
- «Էլ- Գա-Ման» ՍՊԸ

1.2. ԱՁ Մեսրոպ Վիգենի Աղազարյան-ը ներկայացրել է հրավերով պահանջվող բոլոր հավելվածները, այդ թվում տուժանքի մասին համաձայնությունը:

1.3. Հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար ԱՁ Մեսրոպ Վիգենի Աղազարյան-ի գնային առաջարկը հետևյալն է՝ 8 959 950 (ութ միլիոն ինը հարյուր հիսունինը հազար ինը հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

1.4. «Էլ-Գա-Ման» ՍՊԸ-ի հայտը armeps.am գնումների էլեկտրոնային համակարգը թույլ չի տալիս բացել:

Հարց 2. Հրավեր ներկայացրած հայտերի և մասնակիցների գրաված տեղի մասին:

Հանձնաժողովը որոշեց՝

2.1. Ներկայացված հայտի հիման վրա առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվել ԱՁ Մեսրոպ Վիգենի Աղազարյան-ին:

2.3. Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանին՝

- Սույն նիստին հաջորդող աշխատանքային օրը ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ հայցումը:
- Սույն նիստի հաջորդող օրը www.gnumner.am կայքում հրապարակել հայտի բացման նիստի արձանագրությունը:
- Ծանուցել առաջին տեղ գրաված մասնակցին սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում, սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով գնահատող հանձնաժողովին ներկայացնի սույն հրավերի 5-րդ հավելվածով (դիմում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման մասին)՝ որին՝ համաձայն հրավերի, կցի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվող՝ արտադրական օդորակիչների նորոգման և տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարված լինելը փաստող առնվազն մեկ պայմանագրի (կամ պայմանագրերի) պատճենները, դրանց հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:
- Դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն, հետևյալ պարզաբանմամբ, ինչու էլեկտրոնային համակարգը թույլ չի տալիս բացելու երկրորդ մասնակցի կողմից ներկայացրած հայտը

Հարց 3. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի օդորակիչների նորոգման և տեխնիկական սպասարկման աշխատանքների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանին՝

1.1. ՀՀ ֆինանսների նախարարությունից հարցման պատասխան եզրակացությունը և առաջին տեղ զբաղեցրած մասնակցից էլեկտրոնային փոստով հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը ստանալուց հետո այն տրամադրել գնահատող հանձնաժողովի անդամներին:

1.2. Հանձնաժողովի անդամներից գնահատման թերթիկները ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում ամփոփել և հրավիրել գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի
Նախագահ — Հ. Հովհաննիսյան

Անդամներ՝ — Ս. Չիդեմյան
Ա. Միրաքյան
Ա. Վարդապետյան
Լ. Օհանյան

Քարտուղար՝ — Ա. Պետրոսյան